

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽԱՆՏՄԱՆ ՏԵՍԱԿ	ԽԱՆՏՄԱՆ ԵՆԹԱՏԵՍԱԿ	ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ	ԻՆՉ ԱՆԵԼ
Ընտրական հանձնաժողովներ	Պաշտոնյաների ներգրավում հանձնաժողովներում	Տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել Ազգային ժողովի պատգամավորները, Նախարարները և Նրանց տեղակալները, համայնքների ղեկավարները, մարզպետները և Նրանց տեղակալները, դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի ծառայողները, հատուկ քննչական ծառայության ծառայողները, ոստիկանությունում ծառայողները, ազգային անվտանգության ծառայողները, դատական ակտերի հարկադիր կատարման, քրեակատարողական ծառայություններում ծառայողները, զինծառայողները, վստահված անձինք, ընտրություններին մասնակցող կուսակցության, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուի լիազոր ներկայացուցիչները, դիտորդները, թեկնածուները: Տարածքային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել նաև ավագանու անդամները:	<ul style="list-style-type: none"> ➤ Ճշտել պաշտոնյաների անձը և փաստն արձանագրել լիտորոգի քարտեզում: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ և/կամ ՏԸՀ՝ խախտումը վերացնելու համար:
	Թեկնածուի հետ փոխկապակցված անձանց ներգրավում հանձնաժողովներում	Թեկնածուի հետ փոխկապակցված անձինք են համարվում , թեկնածուի ամուսինը, զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները:	<ul style="list-style-type: none"> ➤ Ճշտել թեկնածուի հետ փոխկապակցված անձանց ով լինելը, նրանց ազգակցական կապը և փաստն արձանագրել լիտորոգի քարտեզում՝ համապատասխան հասցեով: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ և/կամ ՏԸՀ:
	Հանձնաժողովի անդամների ներգրավում քարոզչությանը	Բոլոր մակարդակների հանձնաժողովի անդամներին արգելվում է իրականացնել քարոզչություն, տարածել քարոզչական նյութեր կամ քարոզչական բնույթի այլ գործողություններ իրականացնել	<ul style="list-style-type: none"> ➤ Տեսա-լուսանկարել քարոզչության դեպքերը և փաստն արձանագրել լիտորոգի քարտեզում: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ՝ վարչական վարույթ հարուցելու համար:
Ցուցակներ	Ցուցակների անճշտություններ	Ընտրացուցակների անճշտություն է, օրինակ՝ մահացածի անվան առկայությունը կամ ընտրողի անվան բացակայությունը ցուցակում, հաշվառման հասցեում կողմնակի անձանց առկայությունը, կրկնությունները, կեղծ հասցեները և այլն: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին:	<ul style="list-style-type: none"> ➤ Լուսանկարել ցուցակների անճշտությունը՝ որպես ապացույց և տեղադրել լիտորոգի կայքէջի ահագանգերի քարտեզում: ➤ Դիմել համապատասխան անձնագրային բաժին՝ ոչ ուշ, քան քվեարկությունից 10 օր առաջ անճշտությունը վերացնելու պահանջով, իսկ անճշտության հետ կապված վեճի դեպքում՝ դիմել դատարան:

Քարոզչություն	Քարոզչություն իրավունք չունեցող անձանց կողմից	Քարոզչության իրավունք չունեն <ul style="list-style-type: none"> ➤ դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգության, քրեակատարողական, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում ծառայողները, զինծառայողները. ➤ ընտրական հանձնաժողովների անդամները: 	<ul style="list-style-type: none"> ➤ Տեսա-լուսանկարել քարոզչության դեպքերը և փաստն արձանագրել լոխտորդի քարտեզում: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ վարչական վարույթ հարուցելու համար:
	Քարոզչություն պաշտոնյաների լիազորություններն իրականացնելիս	Իրենց լիազորություններն իրականացնելիս արգելվում է քարոզչություն կատարել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական և համայնքային ծառայողներին, (բացառությամբ ԱԺ պատգամավորների), ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին:	<ul style="list-style-type: none"> ➤ Տեսա-լուսանկարել քարոզչության դեպքերը և փաստն արձանագրել լոխտորդի քարտեզում: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ վարչական վարույթ հարուցելու համար:
	Քարոզչություն հանրակրթական հաստատություններում	Հանրակրթական ուսումնական հաստատությունների դահլիճները թեկնածուներին ու ընտրություններին մասնակցող կուսակցություններին կարող են տրամադրվել միայն ժամը 18.00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին և միայն այն դեպքերում, եթե տվյալ համայնքում (Երևանի վարչական շրջանում) գոյություն չունեն նախընտրական քարոզչության անցկացման համար համապատասխան այլ դահլիճներ:	<ul style="list-style-type: none"> ➤ Տեսա-լուսանկարել քարոզչության դեպքերը և փաստն արձանագրել լոխտորդի քարտեզում ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ վարչական վարույթ հարուցելու համար:
Հանրային ռեսուրսներ	Շտաբների տեղակայում հանրային շենքերում	Ընտրական շտաբները չեն կարող տեղակայվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում (բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրական շտաբները զբաղեցնում են այդ մարմիններին չպատկանող տարածք)	<ul style="list-style-type: none"> ➤ Տեսա-լուսանկարել շտաբների սխալ տեղակայման դեպքերը և փաստն արձանագրել լոխտորդի քարտեզում: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ վարչական վարույթ հարուցելու համար:
	Շտաբների տեղակայում հանրակրթական հաստատություններում	Ընտրական շտաբները չեն կարող տեղակայվել հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերում:	<ul style="list-style-type: none"> ➤ Տեսա-լուսանկարել շտաբների սխալ տեղակայման դեպքերը և փաստն արձանագրել լոխտորդի քարտեզում: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ վարչական վարույթ հարուցելու համար:
	Շտաբների տեղակայում ընտրական հանձնաժողովների շենքերում	Ընտրական շտաբները չեն կարող տեղակայվել այն շենքերում, որտեղ գործում են ընտրական հանձնաժողովները:	<ul style="list-style-type: none"> ➤ Տեսա-լուսանկարել շտաբների սխալ տեղակայման դեպքերը և փաստն արձանագրել լոխտորդի քարտեզում: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ վարչական վարույթ հարուցելու համար:
	Ծառայողական	Հանրային ծառայող հանդիսացող թեկնածուներին,	<ul style="list-style-type: none"> ➤ Տեսա-լուսանկարել ծառայողական

ռեսուրսներ	տարածքների օգտագործում	ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուներին արգելվում է նախընտրական քարոզչություն իրականացնելիս օգտագործել ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված տարածքները, օրինակ՝ նախընտրական հանդիպումներ կազմակերպել իր գրասենյակում, աշխատավայրում, ենթակայության տակ գտնվող հիմնարկի տարածքում և այլն:	տարածքների օգտագործման դեպքերը և փաստն արձանագրել լոգոտրոֆի քարտեզում: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ վարչական վարույթ հարուցելու համար:
	Ծառայողական տրանսպորտի/կապի միջոցների օգտագործում	Հանրային ծառայող հանդիսացող թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուներին արգելվում է նախընտրական քարոզչություն իրականացնելիս օգտագործել ծառայողական տրանսպորտը և կապի միջոցները: Օրինակ՝ նախընտրական հանդիպումների գնալ ծառայողական մեքենաներով, նախընտրական աշխատանքների կազմակերպման համար օգտագործել ծառայողական հեռախոսը, ֆաքսը, աշխատանքային էլ.հասցեն և կապի այլ միջոցները:	➤ Տեսա-լուսանկարել ծառայողական տրանսպորտի և կապի միջոցների օգտագործման դեպքերը և փաստն արձանագրել լոգոտրոֆի քարտեզում: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ վարչական վարույթ հարուցելու համար:
	Ծառայողական նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործում	Հանրային ծառայող հանդիսացող թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուներին արգելվում է նախընտրական քարոզչություն իրականացնելիս օգտագործել ծառայողական նյութական ու մարդկային ռեսուրսները: Օրինակ՝ նախընտրական հանդիպումներին բերել իր անմիջական կամ ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատողներին, կամ վերջիններիս ներգրավել քարոզչական այլ աշխատանքների մեջ: Արգելվում է նաև նախընտրական քարոզչության համար օգտագործել ծառայողական գրասենյակային սարքերը, գրենական պիտույքները, տրանսպորտի վառելիքը և այլ միջոցներ:	➤ Տեսա-լուսանկարել ծառայողական նյութական ու մարդկային դեպքերը և փաստն արձանագրել լոգոտրոֆի քարտեզում: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ վարչական վարույթ հարուցելու համար:
	Հանրային բարեկարգման աշխատանքներ	Ընտրություններին ընդառաջ սովորաբար աննախադեպ ակտիվանում են հանրային բարեկարգման աշխատանքները, այդ թվում՝ ասֆալտապատում, բակային բարեկարգումներ, կանաչապատում, վերելակների նորոգում և այլն:	➤ Տեսա-լուսանկարել հանրային բարեկարգման աշխատանքների դեպքերը և փաստն արձանագրել լոգոտրոֆի քարտեզում: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ վարչական վարույթ հարուցելու համար:
Ընտրակաշառք կամ խոստումներ	Գումար	Որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին քվեարկելու համար ընտրողներին տրվում է դրամ կամ խոստացվում է դրամ:	➤ Հավաքել փաստեր դրամական կաշառք տալու, կաշառքի խոստման, մթերք

	Գույք կամ գույքային իրավունքներ	Որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին քվեարկելու համար ընտրողներին տրվում է կամ խոստացվում է գույք կամ գույքային իրավունք, օրինակ՝ տրվում է շարժական կամ անշարժ գույք, սեփականացվում է ինքնակամ կառույցը, տրվում է շին.թույլտվություն կամ այլ իրավունքներ, որոնք այլ հանգամանքներում չէր տրամադրվի կամ կտրամադրվեր երկարաժամկետ ընթացակարգով:	բաժանելու, արտոնյալ պայմաններով ծառայություններ տրամադրելու, զեղչեր սահմանելու, «Բարեգործական» ակցիաներ անելու վերաբերյալ և արձանագրել լոկոտորդի կայքէջի ահազանգերի քարտեզում:
	Օգնություն՝ բնամթերքի տեսքով	Որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին քվեարկելու համար ընտրողներին տրվում է կամ խոստացվում է բնամթերք՝ սննդամթերքի, հագուստի, սրմացուի և նյութական այլ արժեքի տեսքով:	<ul style="list-style-type: none"> ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ՝ վարչական իրավախախտման արձանագրություն կազմելու և դատարան դիմելու համար: ԿԸՀ-ի կողմից վարչական իրավախախտման արձանագրություն չկազմելու և/կամ դատարան չդիմելու դեպքում դիմել վարչական դատարան: ➤ Հաղորդում ներկայացնել ՀԶԾ ընտրակաշառք տալու կամ ստանալու դեպքերով:
	Ծառայություններ	Որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին քվեարկելու համար ընտրողներին մատուցվում ծառայություններ՝ բակային բարեկարգում, տան վերանորոգում, պարտքերի զիջում, բժշկական սպասարկման համար վճարում այլն:	
	«Բարեգործական» ակցիաներ	Որոշ թեկնածուների կողմից նախընտրական քարոզչությունը զուգակցվում է «բարեգործությամբ», որի անվան տակ ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տրվում (խոստացվում) է դրամ, սննդամթերք, արժեթղթեր ու ապրանքներ կամ մատուցվում (խոստացվում) ծառայություններ: Բարեգործության հետ միաժամանակ նախընտրական քարոզչություն իրականացնելու համար նախատեսված է վարչական պատասխանատվություն:	
Մրցակցության խոչընդոտներ	ՉԼՄ-ներով ելույթների սահմանափակում	Թեկնածուներին և կուսակցություններին ՉԼՄ-ներով ելույթների հավասար հնարավորություն չի տրվում կամ սահմանափակվում է:	<ul style="list-style-type: none"> ➤ Հավաքել փաստեր ՉԼՄ-ներով ելույթների սահմանափակման վերաբերյալ և փաստն արձանագրել լոկոտորդի քարտեզում: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ վարչական վարույթ հարուցելու համար:
	Քարոզչության համար տարածքների չտրամադրում	Որոշ թեկնածուներին և կուսակցություններին մերժում են նախընտրական հանդիպումներ կազմակերպելու կամ քարոզչության համար տարածքներ տրամադրել:	<ul style="list-style-type: none"> ➤ Հավաքել փաստեր քարոզչության համար տարածքների չտրամադրման վերաբերյալ և փաստն արձանագրել լոկոտորդի քարտեզում: ➤ Ներկայացնել դիմում ԿԸՀ վարչական վարույթ հարուցելու համար:
Ճնշումներ	Քվեարկելու որևէ կուսակցության կամ դրա թեկնածուի օգտին	Ճնշումներն ընտրողների նկատմամբ կարող են արտահայտվել ղեկավար անձանց կողմից, պաշտոնեական կամ ծառայողական դիրքն օգտագործելով և իրենց ենթակայության տակ գտնվողներին հարկադրելով, օրինակ՝ գնալ ընտրությունների,	<ul style="list-style-type: none"> ➤ Հավաքել փաստեր ճնշումների վերաբերյալ և արձանագրել լոկոտորդի կայքէջի ահազանգերի քարտեզում՝ համապատասխան հասցեով:

	<p>Չփվեարկելու որևէ կուսակցության կամ դրա թեկնածուի օգտին</p>	<p>Փվեարկել կոնկրետ թեկնածուի համար, փվեարկելուց հետո որպես ապացույց ցույց տալ կամ լուսանկարել փվեարթերթիկը, մասնակցել «կարուսելի», հրաժարվել դիտորդ կամ վստահված անձ լինելուց և այլն:</p> <p>Ճնշումները կարող են դրսևորվել ընտրողին կամ նրա հարազատներին աշխատանքից ազատելու, պարզևատումից զրկելու կամ այլ սպառնալիքներով, բռնություններով կամ այլ ձևով:</p>	<ul style="list-style-type: none"> ➤ Դիմել ԿԸՀ վարչական վարույթ հարուցելու համար: ➤ Ներկայացնել հանցագործության մասին հաղորդում ՉԲԾ:
<p>Այլ</p>	<p>Անձնագրերի հավաքում</p>	<p>Տարբեր պատճառաբանություններով համատիրությունների, դպրոցների, պոլիկլինիկաների կամ այլ կառույցների ու անձանց կողմից հավաքվում են քաղաքացիների անձնագրերը կամ տվյալները:</p>	<ul style="list-style-type: none"> ➤ Հավաքել փաստերը և արձանագրել լոխտորդի կայքէջի ահազանգերի քարտեզում: ➤ Ներկայացնել հանցագործության մասին հաղորդում ՉԲԾ:
	<p>Անձանց ցուցակագրում</p>	<p>Պետական և մասնավոր կառույցների կողմից հավաքագրվում են իրենց պոտենցիալ ընտրողների ցուցակները:</p>	<ul style="list-style-type: none"> ➤ Հավաքել փաստերը և արձանագրել լոխտորդի կայքէջի ահազանգերի քարտեզում: ➤ Ներկայացնել հանցագործության մասին հաղորդում ՉԲԾ: